



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ  
ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 63

ք. Մարալիկ

15 մայիսի 2012 թվական

ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՀԱԿՈՒ ԱՐԱՄՍՅԻՄԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԵՎ ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ԱՆԺԻԿ  
ՍԱՄՍՈՆԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Քննարկելով Մարալիկ քաղաքի Գործարանային փողոց N 35 հասցեի տան բնակչի կողմից լիազորված անձ Հասմիկ Վոլոդիայի Սահակյանի 11.05.2012 թվականի դիմումը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանգուցյալ Անժիկ Մամսոնի Հովսեփյանի և Հակոբ Արամայիսի Սահակյանի կողմից ք. Մարալիկ նախկին Գործարանային փողոց N 35, այժմ Հր. Շահինյան փողոց N 35 հասցեի հողամասում 1965 թվականին կառուցվել է բնակելի տուն, 1970 թվականին՝ պարիսպ, 1978 թվականին՝ ավտոտնակ, 1980 թվականին՝ օժանդակ շինություն և բնակելի տան որոշակի մաս, սակայն սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերը չեն պահպանվել, միաժամանակ օրինական հատկացված 0.08 հա հողամասի՝ կից ավել օգտագործվում է 0.03605 հա հողամաս, ուստի ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի դրույթներով, Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տների կարգավիճակի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների դրույթներով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Մարալիկ քաղաքի բնակիչ Հակոբ Արամայիսի Սահակյանի և հանգուցյալ Անժիկ Մամսոնի Հովսեփյանի կողմից ք. Մարալիկ նախկին Գործարանային փողոց N 35, այժմ Հր. Շահինյան փողոց N 35 հասցեում գտնվող հողամասում 1965 թվականին կառուցված բնակելի տան, 1970 թվականին կառուցված պարսպի, 1978 թվականին կառուցված ավտոտնակի, 1980 թվականին կառուցված օժանդակ շինության և բնակելի տան որոշակի մասի, ինչպես նաև օրինական հատկացված 0.08 հա հողամասի, իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն 0.0300 հա անհատույց հատկացված հողամասի, իսկ մնացած 0.00605 հա հողամասի համար կնքել ուղղակի

վաճառքի պայմանագիր՝ մուծելով գումար, տվյալ պահին գործող հողի կադաստրային արժեքի չափով և գույքային իրավունքները վերականգնել՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը:

2. Մույն որոշման մեկ օրինակը ներկայացնել Անշարժ գույքի կադաստրի Անիի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու նպատակով:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ